ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ — СТАТЬИ И СООБЩЕНИЯ

I

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ ՃԱՆԱՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Ռուսաստանի Պետական Դուման 1995 թ. ապրիլի 14-ին միաձայն ընդունեց հետևյալ հայտարարությունը.

«Հենվելով անհերքելի պատմական փաստերի վրա, որոնք վկայում են Արևմտյան Հայաստանի տարածքում 1915—1922 թթ. հայերի բնաջնջման մասին,

հետևելով ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած միջազգային ոգուն ու տառին,

նկատի ունենալով պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վաղեմության ժամկետի մասին 1968 թ. նոյեմբերի 26-ի միջազգագիրը,

ձգտելով վերածնել ռուսական պետության մարդասիրական ավանդույթները,

հիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ եվրոպական մեծ տերությունները դեռ 1915 թ. հայ ժողովրդի հանդեպ թուրքական կայսրության գործողությունները որակել են որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»,

նշելով, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով,

Պետական դուման

Դատապարտում է 1915—1922 թթ. հայերի բնաջնջման կազմակերպիչներին, իր կարեկցանքն է հայտնում հայ ժողովրդին և ապրիլի 24-ը համարում ցեղասպանության զոհերի հիշատակի օր»:

Ստորև բերում ենք հայերի Մեծ Եղեռնի 80-ամյակի կապակցությամբ Ռուսաստանի Պետական Դումայի ընդունած հայտարարության ռուսերեն տեքստը, որը «Հանդեսի» խմբագրությանն է տրամադրել Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատունը։

«Основываясь на неопровержимых исторических фактах, свидетельствующих о поголовном истреблении армян на территории Западной Армении в 1915—1922 годах,

следуя духу и букве принятых Организацией Объединенных Наций

— Конвенции о предупреждении преступления геноцида и наказании за него, 9 декабря 1948 года,

— Конвенции о неприменимости срока давности к военным преступлениям и преступлениям против человечества, 26 ноября 1968 года,

стремясь к возрождению гуманистических традиций российского государства,

напоминая, что по инициативе России европейские великие державы еще в 1915 году квалифицировали действия Османской империи в отношении армянского народа как «преступление против человечества»,

отмечая, что физическое уничтожение братского армянского народа на его исторической родине было совершено с целью создания благоприятных условий для разрушения России,

Государственная дума

осуждает организаторов уничтожения армян в 1915—1922 годах; выражает свое сочувствие армянскому народу и рассматривает 24 апреля как День памяти жертв геноцида».

Հայտարարությունը գրված է պատմության խորիմացությամբ և ունի հիրավի պատմական նշանակություն։ Պատմական է, քանի որ թուրքական կառավարող շրջանները, պաշտոնական և ոչ պաշտոնական պատմագրությունը տասնամյակներ շարունակ փորձել են կեղծել պատմությունը, ժխտել թուրքական պետության կողմից իրականացված բարբարոսությունները արևմտահայության նկատմամբ։

«Թուրքիայում հայերի ցեղասպանություն չի եղել», միաբերան պնդել ու պնդում են թուրքական կառավարողներն ու նրանց «գիտուն» սպասավորները։ Մինչդեռ պատմական ճշմարտությունն այն է, որ XIX դարի երկրորդ կեսին և XX դարի առաջին տասնամյակներին արևմտահայությունը ենթարկվեց զանգվածային կոտորածների։ Առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովուրդն ապրեց հազարամյակների իր պատմության ամենաողբերգական շրջանը։ Հատկապես 1915—1916 թթ. դարձան սև տարեթվեր նրա տարեգրության մեջ և միաժամանակ կազմեցին համաշխարհային պատմության ամենաեղերական էջերից մեկը։ Երիտթուրքերի գաղանային ծրագրով և Թուրքիային դաշնակից կայզերական Գերմանիայի թողտվությամբ ու խրախուսմամբ ցեղասպանության ենթարկվեց արևմտահայությունը, նրա հայրենիքը վերածվեց մոխրակույտերի։

Տակավին 1915 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սերգեյ Սազոնովը հեռագրում էր Փարիզի և Լոնդոնի ռուսական դեսպաններին, ուր մասնավորապես ասվում էր. «Մինիստրությունում ստացվել են նոր տեղեկություններ Ասիական Թուրքիայում տեղի ունեցող անարխիայի և թուրքերի կողմից հայերի կոտորածի մասին։ Բարեհաճեցեք առաջարկելու ֆրանսիական (անգլիական) կառավարությանը մեզ հետ և Անգլիայի (Ֆրանսիայի) հետ միասին հրատարակելու դիմում Դռանը, որտեղ հայերի կոտորածի անձնական պատասխանատվությունը դրվի Թուրքիայի մինիստրների խորհրդի բոլոր անդամների վրա, ինչպես նաև այդ դեպքերի հետ կապ ունեցող բոլոր քաղաքացիական և զինվորական պաշտոնյաների վրա» (Геноцид армян в Османской империи, сборник документов и материалов под ред. М. Нерсисяна, Е., 1966, с. 149).

Ռուսաստանի նախաձեռնությամբ Թուրքիայի ոճրագործությունները դատապարտող երեք դաշնակից պետությունների (Ռուսաստան, Անգլիա, Ֆրանսիա) 1915 թ. մայիսի 24-ի հայտարարությունը Թուրքիայի հակահայկական քաղաքականությունը որակեց որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»։ Բայց դրանից հետո էլ իրադրությունը ոչնչով չփոխվեց։ Թուրքական յաթաղանը հետագայում ևս շարունակեց իր սև գործը։ Օգտվելով բարենպաստ պայմաններից, երիտթուրքերը ոչ միայն ետ նվաճեցին Արևմտյան Հայաստանի՝ ռուսական զորքերի կողմից ազատագրված տարածքները, այլև 1918 թ. ներխուժեցին Անդրկովկաս՝ մահ սփռելով ամենուրեք։ Երիտթուրքերին փոխարինած քեմալականները 1920 թ. սեպտեմբերին նոր արշավանք սկսեցին դեպի Արևելյան Հայաստան, գրավեցին Կարսն ու Շիրակի դաշտը՝ անխնա կոտորելով հայերին, առանց տարիքի ու սեռի խտրության։

Հայերի ցեղասպանության հանցավորները չկանգնեցին աշխարհի ժողովուրդների դատի առաջ և 80 տարի է, ինչ չի վերականգնվում արդարությունը։ Ավելի քան 300-ամյա ռուսական կողմնորոշում ունեցող հայ ժողովուրդը համոզված էր, որ վաղ թե ուշ լռության սառույցը պետք է ջարդվի բարեկամ Ռուսաստանի կողմից։ Եվ նա չսխալվեց։ Ռուս ժողովրդի հետ հայ ժողովրդի հավերժ բարեկամության ջերմ պաշտպան, բոլոր ժամանակների մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի բնորոշմամբ «Մեր շատ թշնամի և քիչ բարեկամ տեսած ցեղը» որքան անհաշտ է եղել իր շատ թշնամիների հանդեպ, առավել երախտահատույց է եղել իր սակավաթիվ բարեկամներին, առաջին հերթին Ռուսաստանին, որն իր հումանիզմի տաքուկ շնչով աջակցել է մեր նյութեղեն և ոգեղեն արարումների կայացմանը, խափանել մեր ծխանի ծուխը վերջնականապես մարելու դիվային վճիռների ահեղ սպառնալիքները։

Ռուսաստանի Պետական Դումայի կողմից Թուրքիայում 1915—1922 թթ. հայոց ցեղասպանության դատապարտման պատմական իրողությունը մենք դիտում ենք որպես ռուս պետականության, ռուս ժողովրդի հումանիզմի, բարձր բարոյականության ու լայնախոհության նոր վկայությունը։

Գիտապատմական անանց արժեք ունեն հատկապես հայտարարության այն տողերը, թե «իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով»։ Հարկ է նկատել, որ այս ճշմարտությունը խիստ այժմեական է, քանզի, ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, հակամարտությունների բուռն ժխորում ավելի է ուժեղանում պանթուրքիզմի վտանգը։

Ցեղասպանությունը դատապարտող Ռուսաստանի Պետական Դումայի հայտարարության մեջ մենք տեսնում ենք ոչ միայն ողբերգություն ապրած ժողովրդի նկատմամբ հարգանքի հենքի վրա խարսխված անկեղծ կարեկցանք։ Պետդումայի հայտարարությունը ունի ոչ միայն բարոյական, այլև քաղաքական մեծ նշանակություն։ Այն, անկասկած, դրական դեր կխաղա նաև թուրք ցեղասպանների կողմից հայության դեմ կատարած հրեշավոր ոճրագործության հետագա համընդհանուր դատապարտման և դրանով իսկ պատմական արդարության վերականգնման գործում։ Այսօրվա միջազգային բարդ պայմաններում հայ ժողովրդի կողքին նորից կանգնեցին ռուս ժողովուրդը և նրա պետականությունը, որի համար հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը։

ГОСУДАРСТВЕННАЯ ДУМА РОССИИ ПРИЗНАЛА ГЕНОЦИД АРМЯН

ТИГРАН САРУХАНЯН

Резюме

Историческая значимость осуждения геноцида армян в Османской Турции в 1915—1922 гг. Государственной Думой России — новое свидетельство гуманизма, высокой нравственности русского народа, российского государства. Особую ценность имеют следующие строки Заявления Госдумы: «...физическое уничтожение братского армянского народа на его исторической родине было совершено с целью создания условий для разрушения России...» Это обстоятельство крайне злободневно, так как после развала СССР в горниле бурных противоречий возрастает опасность пантюркизма. Заявление Госдумы имеет не только моральное, но и большое политическое значение. В сложных условиях современных международных отношений рядом с армянским народом вновь встали русский народ и его государство, за что выражаем нашу глубокую признательность.